



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 81089 գործարքներ, որոնց քանակը 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 8.7%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 23.4%-ով :

2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 20902 օտարման գործարքների 80.9%-ը կազմել են առուվաճառքները, 17.8%-ը՝

նվիրատվությունները և 1.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 12.1%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 16.3%-ով: 2010թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 5865 առուվաճառքի գործարքների 64.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. առաջին կիսամյակում, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 21.7%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 33.8%-ով:

2010թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2010թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.
Կենտրոն	484500	471400	458800
Արաբկիր	361100	383100	356200
Քանաքեռ-Զեյթուն	281200	287200	271400
Նոր-Նորք	240200	239700	221500
Ավան	239900	241400	225700
Էրեբունի	255200	251300	239000
Շենգավիթ	248200	255000	235700
Դավթաշեն	267500	275000	254700
Աջափնյակ	243300	240800	228600
Մալաթիա-Սեբաստիա	230600	243400	222200
Նուբարաշեն	143200	144700	140400
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>272200</b>	<b>275700</b>	<b>259500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 6.2%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 1.3%-ով:

2010թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1826 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 16.1%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 27.5%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/
--------	----------	-----------------------

		առաջին կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2010թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	133700	142500	136000
	Ապարան	41200	45200	44300
	Թալին	48000	52700	49300
Արարատ	Արտաշատ	91600	94300	88100
	Մասիս	135200	129200	117800
	Վեդի	87800	94000	89000
	Արարատ	83000	87100	85700
Արմավիր	Վաղարշապատ	170900	160800	157700
	Արմավիր	118300	121500	114800
	Մեծամոր	80000	82900	80500
Գեղարքունիք	Սևան	93900	94500	88500
	Գավառ	50300	46200	43100
	Մարտունի	77900	85000	81100
	Վարդենիս	33500	32800	32100
	Ճամբարակ	18100	19400	19100
Լոռի	Վանաձոր	92800	92600	91600
	Ստեփանավան	53400	57800	55500
	Սպիտակ	70700	80300	75800
	Ալավերդի	33900	31400	31900
	Տաշիր	35400	35600	35000
	Թումանյան	6000	6100	6100
	Շամլուղ	3300	3400	3400
	Ախթալա	13700	14200	14000
Կոտայք	Աբովյան	145500	161000	145600
	Նոր Հաճն	134800	127900	130700
	Բյուրեղավան	102200	103700	97100
	Եղվարդ	122200	116900	120900
	Հրազդան	65000	63300	59800
	Ծաղկաձոր	179000	181500	179500
	Չարենցավան	89200	78600	78800
Շիրակ	Գյումրի	107400	120700	110700
	Արթիկ	61500	59400	56200
	Մարալիկ	31100	30700	29700
Սյունիք	Գորիս	121700	138900	133400
	Կապան	107200	99800	104000
	Սիսիան	90700	79900	83700
	Մեղրի	54900	58700	55700
	Ագարակ	33200	33300	32800
	Քաջարան	56400	60300	58400
	Դաստակերտ	7700	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	76400	71700	70300
	Եղեգնաձոր	109300	107200	109400
	Ջերմուկ	125000	113300	111700
Տավուշ	Դիլիջան	97900	100600	90300
	Իջևան	140800	139500	131600
	Բերդ	42900	42100	42100
	Նոյեմբերյան	33700	33700	33400
	Այրում	23100	24100	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին

գները, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 3.5%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.9%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2309 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 637, մարզերում միասին վերցրած՝ 1672: 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 6.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 17.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 1.3%-ով:

2010թ. առաջին կիսամյակում, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 28.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 71.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 17.0%-ով:

2010թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2010թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.
Կենտրոն	509600	486100	473800
Արաբկիր	408900	389900	368400
Քանաքեռ-Զեյթուն	314600	291900	282000
Նորք-Մարաշ	310800	285800	282200
Ավան	278300	245600	236200
Էրեբունի	288400	256800	251800
Շենգավիթ	281000	258600	245000
Դավթաշեն	309400	281700	266400
Աջափնյակ	281900	246900	243300
Սալաթիա-Մեքաստիա	272400	247000	233900
Նուբարաշեն	163600	147900	144900
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>310800</b>	<b>285300</b>	<b>275300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 3.6%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել են 8.2%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2010թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	142600	148100	139300
	Ապարան	43600	48900	46400
	Թալին	51500	55600	51200

Արարատ	Արտաշատ	102100	100600	91100
	Մասիս	144800	131600	126700
	Վեդի	93500	97500	91500
	Արարատ	84900	93200	88400
Արմավիր	Վաղարշապատ	179300	167900	167300
	Արմավիր	126700	125900	119300
Գեղարքունիք	Սևան	102900	97000	91700
	Գավառ	57300	49200	48000
	Մարտունի	82400	88400	83500
	Վարդենիս	38900	35200	34500
	Ճամբարակ	22500	21800	21000
Լոռի	Վանաձոր	103100	98600	95200
	Ստեփանավան	57600	61900	58400
	Սյիտակ	73800	82900	78000
	Ալավերդի	37500	35400	34400
	Տաշիր	39400	39100	37200
	Թումանյան	10400	10600	10100
	Շամլուղ	7400	7500	7400
	Ախթալա	17400	18200	18200
Կոտայք	Աբովյան	169500	169100	151300
	Նոր Հաճն	145400	135400	136400
	Բյուրեղավան	115200	109300	99700
	Եղվարդ	132400	128400	124500
	Հրազդան	75200	66200	62900
	Ծաղկաձոր	281400	309100	294300
	Չարենցավան	97800	81400	83300
Շիրակ	Գյումրի	119600	124600	113800
	Արթիկ	65700	62200	58800
	Մարայիկ	34750	32400	31800
Սյունիք	Գորիս	129100	144500	135100
	Կապան	115000	104800	107900
	Սիսիան	95000	84900	86900
	Մեղրի	58100	61100	57700
	Ագարակ	35800	35300	35000
	Դաստակերտ	10400	10500	10400
Վայոց Ձոր	Վայք	83400	75100	72700
	Եղեգնաձոր	116100	114900	112700
	Ջերմուկ	108200	118900	111700
Տավուշ	Դիլիջան	112400	105500	97700
	Իջևան	149000	142900	133300
	Բերդ	46200	44400	43800
	Նոյեմբերյան	37400	35700	34900
	Այրում	24900	26000	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 4.7%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել են 1.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 7682 միավոր /5324.49 հա/ հողեր, որից Երևանում՝ 417 միավոր /63.75 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3915 միավոր /4866.20 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /3.89 հա/,

- բնակելի կառուցապատման հողեր՝ 2725 միավոր /266.19 հա/, որից Երևանում՝ 268 միավոր /15.73 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 877 միավոր /125.81 հա/, որից Երևանում՝ 115 միավոր /41.77 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 97 միավոր /37.70 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.36 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 33 միավոր /19.96 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 22 միավոր /1.57 հա/,
- ջրային հողեր՝ 12 միավոր /6.95 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.11 հա/:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6864 միավորի /4925.56 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 343 միավոր /55.53 հա/, նվիրատվության գործարքներ՝ 683 միավոր /358.92 հա/, որից Երևանում՝ 68 միավոր /7.98 հա/ և փոխանակության գործարքներ՝ 135 միավոր /40.01 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.24 հա/:

Հանրապետությունում 2010թ. առաջին կիսամյակում, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.9%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 24.2%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 11.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 12.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1883.88 հա, որից 1847.06 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.7%-ը կամ 1694 գործարքներ /1286.08 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 73 միավոր /5.81 հա/, իսկ 74.6%-ը կամ 5121 միավորը /3538.82 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 261 միավոր /49.63 հա/:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 49 գործարք /100.66 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	1.16	33	0.95	37	3.70	15	2.40	9	1.20	194	12.60	43	33.43
Արագածոտն	60	55.05	0	0.00	7	1.77	42	2.62	336	275.57	0	0.00	169	38.24	10	0.51
Արարատ	22	35.74	6	5.47	20	1.71	40	0.88	363	210.11	2	0.27	307	27.26	15	0.58
Արմավիր	67	256.35	8	1.53	9	0.59	50	4.54	418	1590.71	4	1.92	288	26.86	22	0.56
Գեղարքունիք	64	69.01	6	2.21	78	7.08	42	5.54	457	311.51	2	0.11	112	12.79	8	0.34
Լոռի	35	198.95	6	0.91	81	7.62	100	3.40	341	193.08	0	0.00	52	5.44	26	1.26
Կոտայք	75	82.72	6	1.09	131	9.95	141	7.70	655	283.93	20	8.75	429	42.12	51	34.19
Շիրակ	6	8.79	7	1.99	98	4.44	47	1.15	191	199.38	2	0.19	65	10.15	16	2.41
Սյունիք	43	419.05	6	0.37	12	0.66	35	1.43	127	104.25	2	0.87	86	6.50	8	0.45
Վայոց Ձոր	18	39.21	0	0.00	10	0.66	32	1.88	31	20.87	0	0.00	22	1.71	4	0.22
Տավուշ	11	9.02	5	1.42	145	11.60	17	2.08	123	53.58	1	0.16	53	6.75	8	2.61
Ընդամենը	401	1173.89	53	16.15	624	47.03	583	34.92	3057	3245.39	42	13.47	1777	190.42	211	76.56

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների, ջրային հողերի.

	<b>Ուղղակի վաճառք</b>								<b>Աճուրդ վաճառք</b>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	72	5.79	3	1.16	33	0.95	36	3.68	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02
Արագածոտն	6	1.44	0	0.00	3	1.32	3	0.12	102	57.89	59	54.94	0	0.00	4	0.45	39	2.50
Արարատ	7	1.37	2	1.30	0	0.00	5	0.07	79	40.71	20	34.02	4	4.17	20	1.71	35	0.81
Արմավիր	5	0.07	1	0.05	0	0.00	4	0.02	127	262.83	65	256.23	7	1.49	9	0.59	46	4.52
Գեղարքունիք	3	0.20	0	0.00	0	0.00	3	0.20	187	83.63	64	69.01	6	2.21	78	7.08	39	5.33
Լոռի	22	0.46	0	0.00	5	0.16	17	0.30	199	210.31	34	198.85	6	0.91	76	7.46	83	3.09
Կոտայք	33	2.09	0	0.00	16	1.41	17	0.68	314	96.49	69	79.84	6	1.09	115	8.54	124	7.02
Շիրակ	34	0.89	3	0.15	19	0.55	12	0.19	124	15.48	6	8.79	4	1.84	79	3.89	35	0.96
Սյունիք	6	0.22	0	0.00	1	0.16	5	0.06	86	420.35	39	418.11	6	0.37	11	0.51	30	1.36
Վայոց Ձոր	4	0.15	0	0.00	1	0.09	3	0.06	53	41.25	15	38.86	0	0.00	9	0.57	29	1.82
Տավուշ	16	1.89	1	0.37	8	0.23	7	1.29	160	21.62	9	8.42	4	1.05	137	11.36	10	0.79
Ընդամենը	208	14.57	10	3.03	86	4.87	112	6.67	1432	1250.58	380	1167.07	43	13.13	538	42.16	471	28.22

Հանրապետությունում 2010թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 21 գործարքներ /6.82 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. առաջին կիսամյակում, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 4.3%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 94.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 5.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 1.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է

21.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 2.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 18.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	49	30.93	50.0	919.2	258.7	225	131.53	365.0	12000.0	4351.6
Ապարան						39	20.75	86.5	2727.3	572.0
Թային	10	24.01	37.6	111.5	58.9	47	88.85	93.6	5494.5	523.6
Ծաղկահովիտ						22	29.95	79.5	1000.0	247.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	13	13.65	65.1	2260.0	598.6	151	70.38	335.1	10833.3	2242.2
Մասիս	3	4.18	110.0	187.5	132.6	64	55.84	200.0	11904.8	3022.3
Վեդի	4	16.19	60.6	994.3	533.5	142	80.71	207.0	10795.1	1823.6
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	28	28.50	35.7	1614.9	186.9	159	98.79	294.3	9090.0	1232.2
Բաղրամյան	25	219.51	33.8	622.1	147.6	79	1094.74	90.6	2561.1	699.0
Վաղարշապատ	12	8.22	33.0	1600.0	503.1	164	386.08	444.4	11764.7	3157.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	49	36.93	38.4	464.4	261.2	280	115.30	199.8	1875.0	417.7
Ճամբարակ	9	13.13	109.3	1440.0	702.7	72	43.47	60.5	953.3	274.9
Մարտունի	2	0.65	122.2	151.3	136.7	38	7.44	51.1	2850.0	610.5
Սևան	3	16.50	225.0	3488.4	1863.8	20	15.66	52.2	2134.8	250.4
Վարդենիս	1	1.80	59.4	59.4	59.4	46	128.24	41.2	2575.1	441.9
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	1	0.15	1100.0	1100.0	1100.0	110	46.66	170.4	6424.2	851.3
Գուգարք	20	192.29	44.0	407.0	223.2	46	12.96	234.6	6065.9	1097.8
Մալիտակ	6	2.34	100.0	745.5	252.6	5	1.34	250.0	5555.5	634.3
Ստեփանավան	7	4.07	240.0	944.9	492.0	46	50.88	90.6	1686.6	362.0
Տաշիր						133	78.54	45.3	1384.4	181.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	31	37.99	68.1	1845.8	371.0	353	64.83	279.3	11942.7	4637.6
Եղվարդ	25	28.44	80.8	3881.6	682.9	219	173.77	174.4	11971.8	3471.3
Հրազդան	13	13.41	133.6	1322.5	762.7	75	44.61	130.5	10256.4	1723.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	2.20	297.0	297.0	297.0	64	73.55	252.0	1693.1	530.7
Ամասիա	1	2.75	76.0	76.0	76.0	11	29.39	40.9	261.0	129.6
Անի	3	2.94	30.0	105.0	68.0	37	36.18	110.6	546.9	297.0
Աշոցք						34	33.32	58.5	215.8	113.4
Արթիկ	1	0.90	520.0	520.0	520.0	40	18.30	79.4	1428.6	269.1
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	11	2.18	550.0	1200.0	631.3	34	25.44	92.6	1023.2	519.9
Կապան	6	11.47	84.0	515.9	253.8	5	2.95	120.0	841.6	297.3



Մեղրի	22	404.46	21.5	6300.0	3160.8	18	3.56	193.0	3000.0	620.1
Միսիան						70	72.30	46.3	1977.4	320.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	34.96	34.4	67.5	47.6	25	18.88	125.0	10000.0	1597.1
Վայք	3	3.90	68.8	182.9	152.9	6	1.99	58.8	1430.7	512.8
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.31	929.5	929.5	929.5	42	9.99	213.3	3783.8	560.3
Իջևան	6	3.97	148.2	1313.3	409.5	31	13.00	267.5	9454.5	1096.7
Նոյեմբերյան	2	4.14	289.8	294.5	292.2	50	30.59	46.7	7368.4	812.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակ	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1493.0	36.8	194.5	115.7	143	340776.0	130.7	22200.0	2573.0
Ապարան						13	14166.0	124.1	609.6	269.2
Թալին	2	3050.0	85.0	304.2	194.6	5	8052.0	63.2	1454.8	142.0
Ծաղկահովիտ						6	16399.0	60.0	214.3	78.4
Արարատի մարզ										
Արտաշատ	13	12085.0	145.0	826.0	516.9	85	99616.0	173.9	7140.3	893.3
Մասիս	5	3349.0	541.3	3118.6	1703.7	160	111108.0	187.5	25000.0	1216.9
Վեդի	2	1635.0	687.7	818.3	753.0	60	59748.0	126.1	5000.0	661.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	8	4667.0	277.7	1400.0	1247.5	87	101240.5	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	13	19657.0	100.0	833.3	189.0
Վաղարշապատ						186	146148.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	33	33555.0	115.8	341.5	224.0	31	31338.0	186.6	1084.3	472.1
Ճամբարակ	15	10498.0	108.0	161.8	125.1	10	9451.0	71.3	2286.2	142.1
Մարտունի	9	4844.0	113.7	248.7	129.1	55	64832.0	119.3	5000.0	274.4
Սևան	21	21895.0	113.3	521.9	293.7	7	8490.5	240.0	3110.4	232.2
Վարդենիս						9	13823.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի	5	413.0	556.5	931.6	631.8	7	6266.0	114.3	1388.9	208.2
Գուգարք	11	4220.0	79.3	5001.4	2351.6	11	7870.0	77.9	14083.3	782.1
Սպիտակ	52	65758.0	47.7	74.6	63.1	24	34076.0	104.9	1348.3	199.0
Ստեփանավան	7	2950.0	82.8	555.3	371.8	6	2924.0	88.2	1666.7	149.9
Տաշիր	1	1280.0	83.3	83.3	83.3	3	2320.0	45.3	400.0	77.6
Կոտայքի մարզ										
Արովյան	51	34177.9	414.1	4076.0	1938.1	202	208006.7	264.5	35353.5	2021.4
Եղվարդ	58	46462.0	419.1	4750.2	2566.3	194	169871.0	173.6	27000.0	2867.1
Հրազդան	6	4766.0	430.0	3234.0	1199.5	31	37186.0	117.7	34848.5	1337.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	34	16877.1	317.1	5067.9	1869.5	23	19653.5	113.6	18750.0	330.7

Ամսաթիվ								45.3	274.7	71.0
Անի	20	7654.0	291.5	676.2	412.0	12	14449.0	67.9	180.6	128.5
Աշոցք						5	30110.0	40.8	144.0	60.0
Արթիկ	25	14371.0	52.5	810.0	397.3	25	37280.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						14	13620.0	112.2	1700.0	305.8
Կապան	10	4871.8	32.0	1552.7	787.7	57	37942.0	67.9	2638.9	243.9
Մեղրի	1	185.0	440.0	440.0	440.0	11	8230.0	68.5	632.9	153.5
Սիսիան						4	5257.0	123.5	875.0	164.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2218.0	749.2	757.5	752.3	12	10970.0	96.7	7659.6	432.4
Վայք	5	3500.0	854.0	1323.0	932.2	9	5940.0	120.7	1448.3	165.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	135	112105.0	158.3	3000.0	2304.0	44	60004.0	74.1	14423.1	479.4
Նոյեմբերյան	2	1510.0	110.6	380.0	245.3	9	7475.0	125.0	1948.1	167.3

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 58 գործարքներ 10.56 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ /2.34 հա/ Գեղարքունիքի, 33-ը՝ /6.75 հա/ Շիրակի, 15-ը՝ Լոռու /1.31 հա/ և 2-ը՝ /0.16 հա/ Կոտայքի մարզերում:

2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5467 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 84.5%-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 20.5%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 20.8%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 341 բնակարանների, 214 անհատական բնակելի տների, 2236 հասարակական և 354 արտադրական նշանակության օբյեկտների, 2085 միավոր /9859.67 հա/ հողերի, 1 այգետանակի և 236 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 83 վարձակալության գործարքների, այդ թվում 38 միավոր /5.45 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 56.6%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել՝ 64.5%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 9859.67 հա հողերից 77.62 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 9782.05 հա հողերի 738.41 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 46.25 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 4530.40 հա, որից 4485.12 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3813.83 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	12.63	88	218.15
Արարատ	1	5.00	98	339.90
Արմավիր	0	0.00	72	259.93
Գեղարքունիք	19	336.70	166	2087.40
Լոռի	0	0.00	59	251.81
Կոտայք	0	0.00	18	263.62
Շիրակ	1	3459.50	338	1025.62
Սյունիք	0	0.00	139	469.58
Վայոց Ձոր	0	0.00	66	20.25
Տավուշ	0	0.00	52	68.69
<b>Ընդամենը</b>	<b>22</b>	<b>3813.83</b>	<b>1096</b>	<b>5004.95</b>

2010թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9928 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2010թ. առաջին կիսամյակում 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 11.2%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 75.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.8%/, առանձնատների /23.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.4%/ և հողերի /13.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4487 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10.3%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 74.3%-ով:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 822 գործարքներ, որից 597՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 80.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 15.0%-ն՝ անհատական բնակելի տների, 2.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.7%-ն՝ ամառանոցների, 0.1%-ն՝ ավտոտնակների, 1.1%-ը՝ հողերի, այդ թվում 0.6%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, նկատմամբ: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել է 5.4%-ով, ընդ որում Երևանում նվազել է 1.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 28.6%-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 3.3 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 3.0 անգամ :

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 5345.84 հա մակերեսով հողեր, որից 36.87 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 96.2% կամ 5143.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.42 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 4053.71 հա, որից 4049.45 հա գյուղատնտեսական նշանակության:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման

միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 5 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 38.9%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 52.2%-ով: 2010թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեցարքունիքի մարզում՝ 45.5%:

2010թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 12078 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 11.1%-ով, իսկ 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 4.5%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.7%/:

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***